

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ

12 հոկտեմբերի 2010 թվականի N 815-Ն (ՀՀ ԳՆԱՏ N 25 (377), 01.11.2010թ)
18 նոյեմբերի 2014 թվականի N 1070-Ն (ՀՀ ԳՆԱՏ N 32 (511), 15.12.2014)
2 փետրվարի 2017 թվականի N 75-Ն (ՀՀ ԳՆԱՏ N 7 (576), 1.03.2017)

1 մարտի 2007 թվականի N 204- Ն
ք. Երևան

**ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԳԱՂՏՆԻՔ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԵՏ ԱՌՆՉՎՈՂ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶՔԱՂԵՑՆՈՂ
ԱՆՁԱՆՑ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՆԹԱՑՆԵՐԻ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Քաղաքացիական ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15¹-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհուրդը **ո Ր Ո Շ Ո Ւ Մ է**.

1.Սահմանել պետական և ծառայողական գաղտնիք պարունակող տեղեկությունների հետ առնչվող քաղաքացիական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց հետ կապված քաղաքացիական ծառայության գործընթացների առանձնահատկությունները (հավելված):

2.Սույն որոշման 1-ին կետով նախատեսված առանձնահատկությունները տարածվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի կողմից սահմանված ցանկում ընդգրկված պետական և ծառայողական գաղտնիք պարունակող տեղեկությունների հետ առնչվող քաղաքացիական ծառայության պաշտոնների հետ կապված հարաբերությունների վրա:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2007 թվականի ապրիլի 1-ից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ**

Մ. ԲԱԴԱԼՅԱՆ

Ա Ռ Ա Ն Ձ Ն Ա Հ Ա Տ Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր

ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԳԱՂՏՆԻՔ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ԱՌՆՉՎՈՂ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ

1. Պետական և ծառայողական գաղտնիք պարունակող տեղեկությունների հետ առնչվող քաղաքացիական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց հետ կապված քաղաքացիական ծառայության գործընթացների առանձնահատկությունները հետևյալն են.

1) *պետական և ծառայողական գաղտնիք պարունակող տեղեկությունների հետ առնչվող քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու մրցույթ (այսուհետ՝ մրցույթ) անցկացնող մրցութային հանձնաժողովների (այսուհետ՝ մրցութային հանձնաժողովներ) կազմում գիտական և ուսումնական հաստատությունների ներկայացուցիչների փոխարեն, քաղաքացիական ծառայության մասին օրենսդրությամբ սահմանված կարգով, ընդգրկվում են ազգային անվտանգության պետական կառավարման լիազոր մարմնի ներկայացուցիչները.*

2) *մրցութային հանձնաժողովների ազգային անվտանգության պետական կառավարման լիազոր մարմնի ներկայացուցիչների թեկնածուների ցուցակը, քաղաքացիական ծառայության մասին օրենսդրությամբ սահմանված կարգով, ներկայացնում է ազգային անվտանգության պետական կառավարման լիազոր մարմինը.*

3) *մրցութային հանձնաժողովների անդամներ պետք է լինեն պետական և ծառայողական գաղտնիք պարունակող տեղեկությունների հետ առնչվելու Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված համապատասխան ձևի ձևակերպված թույլտվություն ունեցող անձինք.*

4) մրցույթին մասնակցելու համար քաղաքացին, քաղաքացիական ծառայության մասին օրենսդրությամբ սահմանված կարգով, պետք է ներկայացնի նաև պետական և ծառայողական գաղտնիք պարունակող տեղեկությունների հետ առնչվելու համապատասխան ձևի ձևակերպված թույլտվության մասին տեղեկանք՝ այն մարմնից, որտեղ նա աշխատում (աշխատել) է.

5) հույժ գաղտնի տեղեկությունների հետ առնչվելու համար պետական և ծառայողական գաղտնիք պարունակող տեղեկությունների հետ առնչվող քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագրում, քաղաքացիական ծառայության մասին օրենսդրությամբ սահմանված կարգով, պետք է ամրագրվի, որ տվյալ պաշտոնը զբաղեցնող քաղաքացիական ծառայողը պետք է ունենա պետական և ծառայողական գաղտնիք պարունակող տեղեկությունների հետ առնչվելու Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված համապատասխան ձևի ձևակերպված առնվազն երեք տարվա թույլտվություն.

6) գաղտնի տեղեկությունների հետ առնչվելու համար պետական և ծառայողական գաղտնիք պարունակող տեղեկությունների հետ առնչվող քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագրում, քաղաքացիական ծառայության մասին օրենսդրությամբ սահմանված կարգով, պետք է ամրագրվի, որ տվյալ պաշտոնը զբաղեցնող քաղաքացիական ծառայողը պետք է ունենա ծառայողական գաղտնիք պարունակող տեղեկությունների հետ առնչվելու Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված համապատասխան ձևի ձևակերպված առնվազն երեք տարվա թույլտվություն.

7) *մրցույթի* մասնագիտական թեստերի 70 տոկոսից առնվազն 35 տոկոսը պետք է լինեն պետական և ծառայողական գաղտնիքին վերաբերող օրենսդրության հարցեր.

8) *մրցույթի* հարցատոմսի մասնագիտական 3 հարցերից առնվազն 2-ը պետք է լինեն պետական և ծառայողական գաղտնիք պարունակող տեղեկություններին առնչվող հարցեր.

9) *մրցույթի* պետական և ծառայողական գաղտնիք պարունակող տեղեկություններին առնչվող մասնագիտական թեստերն ու հարցատոմսի մասնագիտական հարցերը <<Քաղաքացիական ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասում նշված մարմինը (այսուհետ՝ համապատասխան մար-

մին) կազմում է ազգային անվտանգության պետական կառավարման լիազոր մարմնի հետ համատեղ.

10) ուժը կորցրած է ճանաչվել.

11) մրցույթի մասնակիցների հետ անցկացված հարցազրույցների ձայնագրությունները, հարցատոմսը, հարցատոմսի հարցերի ճիշտ պատասխանների *ձևանմուշները* հարցազրույցի փուլի արձանագրության ու ձայնագրության տեղեկությունները ենթակա չեն հրապարակման.

12) *մրցույթին* մամուլի և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների, դիտորդների ու հասարակական միավորումների ներկայացուցիչների մասնակցությունը չի թույլատրվում.

13) պետական և ծառայողական գաղտնիք պարունակող տեղեկությունների հետ առնչվող կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարի, իսկ նման ստորաբաժանման բացակայության դեպքում պետական և ծառայողական գաղտնիք պարունակող տեղեկությունների մասով պատասխանատու քաղաքացիական ծառայողի քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագրում, քաղաքացիական ծառայության մասին օրենսդրությամբ սահմանված կարգով, պետք է ամրագրվի, որ տվյալ պաշտոնը զբաղեցնող քաղաքացիական ծառայողը պետական և ծառայողական գաղտնիք պարունակող տեղեկությունների մասով ենթակա և հաշվետու է համապատասխան մարմնի ղեկավարին.

14) պետական և ծառայողական գաղտնիք պարունակող տեղեկությունների հետ առնչվող քաղաքացիական ծառայողի պարտադիր վերապատրաստման մասնագիտական ծրագրում, քաղաքացիական ծառայության մասին օրենսդրությամբ սահմանված կարգով, ընդգրկվում են նաև պետական և ծառայողական գաղտնիք պարունակող տեղեկություններին առնչվող թեմաներ, որոնց մասով ծրագիրը կազմվում է ազգային անվտանգության պետական կառավարման լիազոր մարմնի հետ համատեղ.

15) պետական և ծառայողական գաղտնիք պարունակող տեղեկությունների հետ առնչվող քաղաքացիական ծառայողի պարտադիր վերապատրաստումը, քաղաքացիական ծառայության մասին օրենսդրությամբ սահմանված կարգով, որպես

կանոն պետք է անցկացվի ազգային անվտանգության պետական կառավարման լիազոր մարմնում.

16) պետական և ծառայողական գաղտնիք պարունակող տեղեկությունների հետ առնչվող քաղաքացիական ծառայողի հետ կապված ծառայողական քննությունը, քաղաքացիական ծառայության մասին օրենսդրությամբ սահմանված կարգով, պետք է անցկացվի աշխատանքային խմբի կազմով՝ ընդգրկելով նաև ազգային անվտանգության պետական կառավարման լիազոր մարմնի ներկայացուցիչներին՝ տվյալ մարմնի լիազորությունների շրջանակում ծառայողական քննությանը մասնակցելու համար:

2. Մինչև 2007 թվականի ապրիլի 1-ը պետական և ծառայողական գաղտնիք պարունակող տեղեկությունների հետ առնչվող քաղաքացիական ծառայության ժամանակավոր թափուր պաշտոններ ժամկետային աշխատանքային պայմանագրով զբաղեցնող անձանց պետական և ծառայողական գաղտնիք պարունակող տեղեկությունների հետ առնչվելու Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված համապատասխան ձևի ձևակերպված թույլտվություններ չունենալը հիմք է նրանց հետ կնքված ժամկետային աշխատանքային պայմանագրերը լուծելու համար:

3. Մինչև 2007 թվականի հունիսի 1-ը համապատասխան մարմինը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել պետական և ծառայողական գաղտնիք պարունակող տեղեկությունների հետ առնչվող քաղաքացիական ծառայության պաշտոններ զբաղեցնող քաղաքացիական ծառայողների սույն առանձնահատկությունների 1-ին կետի 5-րդ և 6-րդ ենթակետերով նախատեսված պետական և ծառայողական գաղտնիք պարունակող տեղեկությունների հետ առնչվելու Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված համապատասխան ձևի ձևակերպված թույլտվություններ ունենալը:

4. Սույն առանձնահատկությունների 3-րդ կետով նախատեսված համապատասխան ձևի ձևակերպված թույլտվություն չստանալը, ինչպես նաև սույն առանձնահատկությունների 1-ին կետի 5-րդ, 6-րդ ենթակետերով նախատեսված համապատասխան ձևի ձևակերպված թույլտվությունների բացակայությունը հիմք են պետական և ծառայողական գաղտնիք պարունակող տեղեկությունների հետ առնչվող քաղաքացիական ծառայության պաշտոններից ազատելու համար:
